

ՄԷՅՐ ԷԹՈՒՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՕԾՎԵՑ ՇՈՒՇԻԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՂԵԼ Է՝, Է՝ ԵՎ ԼԻՆԵԼՈՒ Է՝...

«Նա Աստծու զորությանն ճանանչն է. Ամենակալի ճշմարիտ փա՛ռի ծագումը, եւ դրա համար էլ ոչ մի պիղծ բան չի խառնուում նրանո»:

(ԻՄԱՍՏ. Է 25)

Իմաստության Գրքից առնված և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Այլակերպության տոնի Աստվածաշնչական ճաշու ընթերցվածներում տեղ գտած այս հոգեպարար խոսքերն ասես նոր իմաստ ու խորհուրդ էին ստացել Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու օծման օրը, գի Աստվածորդու հետ խորհրդարար այլակերպվեց, վերանորոգվեց նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և համայն հայությունը:

Օրը թերկրալի ու հոգելից էր ոչ միայն նրանց համար, ովքեր եկել էին ներկա գտնվելու Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցու վերաբացման, օծման և անդրանիկ Ս. Պատարագի մատուցման հանդիսավոր արարողությանը, այլև համայն հայության համար՝ ի Հայաստան, ի Արցախ և ի Սփյուռս աշխարհի:

Ս. Ամենափրկիչ եկեղեցու մասին. պատմական ակնարկ

Շուշի բերդամաղաքում (պատմական անվանումներն են՝ Կարկառա բերդ, Քարագլուխ) վեր խոյացող հոյակերտ տաճարի, Ս. Ամենափրկիչ եկեղեցու մասին գրավոր հիշատակությունները վերագրվում են 1722-ին. այդ ժամանակ եկեղեցու տեղում եղել է մի փոքրիկ բազիլիկ: Այստեղ 1858 թվականին Խանդամիրյանց բարեբարների միջոցներով կառուցվել է եռահարկ զանգակատուն:

Բուն՝ Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու կառուցումը տևել է 19 տարի՝ 1868-1878 թթ., ղազանչեցիների միջոցներով: Այն օծվել է 110 տարի առաջ՝ 1888 թվականի սեպտեմբերի 20-ին:

Ինչպես ավանդում է տաճարում հայտնաբերված արձանագրությունը, Ս. Ամենափրկչի ճարտարապետը շուշեցի Սիմոն Տեր-Հակոբյանցն է՝ այն տարիների Շուշիի գլխավոր ճարտարապետը:

Ղազանչեցոց եկեղեցում են հավաքվել ու պահպանվել արժեքավոր բազմաթիվ ձեռագրեր ու տպագիր մատյաններ, որոնք թվագրվում են 1612, 1658, 1660 և այլ տարիներով: Տաճարն ունեցել է նաև եկեղեցական թանկագին մասունքներ, որոնց

թվում՝ Սուրբ Կենաց Փայտը, Սրբերի մասունքներ, այդ թվում նաև Ս. Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Ս. Գրիգորիս Աղվանից Կաթողիկոսի Աջը:

1920 թվականի մարտ ամսից, երբ տեղի ունեցավ Շուշիի հայ բնակչության կոտորածը ճեմալական-մուսավաթականների կողմից, եկեղեցին դադարեց գործող լինելուց: Ազերիներն սկսեցին այն դանդաղորեն ու կանխամտածված կերպով ավերել:

1981 թվականին, հայ մտավորականների ճնշմամբ, Մոսկվան և Ադրբեջանը թույլատրեցին վերանորոգել տաճարը՝ որպես ճարտարապետական կոթող: 1984 թվականին Երևանից Շուշի մեկնեց ճարգործ վարպետ Վոլոդյա Բաբայանը և ձեռնամուխ եղավ տաճարի վերականգնման աշխատանքներին: Աշխատանքները շարունակվեցին յոթ տարի: Վերականգնման հիմնական աշխատանքներն ավարտին էին մոտենում, երբ 1988-ին ազերիները լիովին հայաթափեցին Շուշին: Մեծ վնաս կրեց նաև եկեղեցին. ջարդուփշուր արվեցին զանգակատան վերնամասում գտնվող հրեշտակների մարդահասակ չորս արձաններից երեքը (մեկը վաղուց էր ոչնչացվել), եկեղեցին վերածվեց զինապահեստի:

Տաճարի ու զանգակատան աշխատանքները վերսկսվեցին 1992-ի մայիսից: 1997 թվականի ամռանը, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին, տեղադրվեցին եկեղեցու դռները (դռների փորագրությունը՝ Ռոբերտ Ասկարյանի, Ստեփանակերտ): Ս. Ամենափրկչի խաչը տեղադրվեց 1997-ի նոյեմբերի 25-ին, իսկ Սուրբ Սեղանը՝ 1998-ի մարտի 4-ին՝ Մեծի Պահոց շրջանում:

Զանգակատան զանգերը երկուսն են և կախվել են այս տարվա ապրիլի 7-ին՝ Ս. Աստվածածնի Ավետման տոնին: Մեծ զանգը ձուլվել է Տուլա քաղաքում, 1857 թվականին: Նույն օրը տեղադրվել է նաև զանգակատան խաչը:

Տաճարի արտաքին ու ներքին մաքրման և հարդարման աշխատանքներն ավարտվեցին այս տարվա մայիսի 8-ին, կախվեցին հինգ ջահերը: Ավագ Խորանի վարագույրը կախվեց հունիսի 4-ին:

Ս. Ամենափրկիչ եկեղեցու նորոգման հիմնական բարերարը Անդրեաս Ռուբյանն է (ԱՄՆ, Նյու-Ջերսի), որը 110 հազար դոլար տրամադրեց: Իրենց օգնությունն են բերել նաև Կալիֆոռնիայում ապրող մի շարք հայեր (շուրջ 40.000 դոլար): Մարսեյլահայ համայնքը տրամադրել է 5.800 դոլար, Ռուսաստանի Դաշնությունում բնակվող չորս շուշեցիներ՝ 10.000, մոսկվաբնակ Արկադի Վարդանյանը՝ 2.000, երևանցի Գևորգյանը՝ 600: ՀՀ գյուղնախարար Վլադիմիր Մովսիսյանը հովանավորել է զանգակատան խաչի նորոգման աշխատանքները: Զանգակատան նորոգման բուն բարերարը ծագումով արցախցի, ռուսաստա-

նարնակ գործարար Լևոն Հայրապետյանն է: Տասնյակ տոննաներով ցեմենտ է հատկացրել ՀՀ երկաթգծի տնօրեն Սարիպյանցը: Եկեղեցու վերանորոգման գործին իրենց լուման են ներդրել մեծաթիվ արցախցիներ:

Ս. Ամենափրկիչը կառուցված է կաթնագույն մարմարով և իր տեսակով եզակի է Հայոց աշխարհում: Գմբեթի վեղարը մեծության պատճառով (մոտավորապես՝ 17 մ) մետաղյա է, որ արևի ճառագայթներից բազմերանգ ցոլքեր է արձակում:

Լվացում և օծում

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու անդրանիկ օծումից ճիշտ հարյուր տարի անց, հունիսի 18-ին, ի փառս Հայաստանյայց Եկեղեցու և համայն հայության, վերստին կատարվեց տաճարի սրբագործման արարողությունը:

Երեկոյան ժամը 18.00-ին սկսվեց եկեղեցու լվացումը՝ համաձայն Նախնյաց սրբազան կանոնակարգի: Ըստ այդմ լվացվեց ողջ տաճարը նախ սովորական ջրով, ապա՝ գինով:

Հավարտ լվացման, ժամը 20.10-ին, սկսվեց օծման հանդիսավոր արարողությունը: Հավուր սպատշաճի զգեստավորյված հոգևորականաց դասը, Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի գլխավորությամբ, թափոր կազմած և «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի տաճարի գլխավոր դուռը: Հենց մուտքի մոտ, դրսի կողմից, համաձայն Մաշտոցի, ընթերցվեցին Սուրբգրային հատվածներ և համապատասխան սաղմոսներ:

Ապա նույն կերպ մտնելով տաճար, դարձյալ Սուրբգրային ընթերցվածներով, սաղմոսասացությամբ և շարականների երգեցողությամբ, ձեռամբ Պարգև Սրբազանի, կատարվեց տաճարի օծումը: Համաձայն Մաշտոց ծիսարանի, Սրբալույս Մյուռոնով համապատասխանաբար օծվեցին եկեղեցու չորս անկյունները, սյուները, հյուսիսային, հարավային և կենտրոնական դռները, Սեղանը, խորանները..., իսկ վերջում՝ եկեղեցում գործածվելիք կահ-կարասին:

Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծումը, որին ներկա էին մեծաթիվ ուխտավորներ, հյուրեր և հավատացյալներ, ավարտվեց գիշերվա ժամը 2.00-ին:

Անդրանիկ Ս. Պատարագը Ս. Ամենափրկիչ եկեղեցում

Հուլիսի 19-ի այգաբացն առանձնակի շուք ուներ թե՛ շուշեցիների և թե՛ ուխտավորաբար Շուշի ժամանած հավատավոր հայորդիների համար: Վաղ առավոտից լեփ-լեցուն էր եկեղեցու բակը:

Ժամը 11.40-ին զանգերի կանչերը դեպի սրբագործված տաճար էին հրավիրում հայ հավատավորին՝ հոգու բերկրանքը, որպես աղոթք, առ Բարձրյալն առաքելու, Տիրոջ խաղաղաբեր ու կենսատու լույսով կրկին վերարթնության անմեկնելի զգացումն ապրելու:

Ժամը 12.00-ին Ս. Ամենափրկիչ նորաօծ եկեղեցում սկսվեց անդրանիկ Ս. Պատարագը, որին ներկա էին ԼՂՀ-ի կառավարական հանձնախումբը՝ ԼՂՀ-ի նախագահ Արկադի Ղուկասյանի և վարչապետ Ժիրայր Պողոսյանի գլխավորությամբ: Ժամանել էին նաև ՀՀ նախարարներ, Ազգային Ժողովի պատգամավորներ՝ փոխնախագահ Յուրի Բախշյանի գլխավորությամբ, ՀՀ նախագահի խորհրդական Պարույր Հայրիկյանը, Պաշտպանության նախարարության պատվիրակությունը՝ փոխնախարար Աստվածատուր Պետրոսյանի գլխավորությամբ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Րաֆֆի Հովհաննիսյանը, գրող Զորի Բալայանը, ՀՀ Կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լազար Սուլջյանը, պաշտոնատար այլ անձինք, հասարակական, քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ, զինվորականներ, մեծաթիվ հյուրեր ներքին և արտաքին Սփյուռքից ու Հայաստան աշխարհից, ուխտավորներ:

Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր թեմի բարեշնորհ առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը:

Հընթացս մատուցվող Սուրբ և անմահ Պատարագի, հանդիսավորաբար Ս. Սեղան բարձրացվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ***«Օրհնության գիրը»***, որն ընթերցվեց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Զուլջյանի կողմից: Վերջում Սրբազան Հայրը, հանուն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ս. Ամենափրկիչ եկեղեցուն նվիրեց արծաթյա մի սկիհ, որից Ս. Հաղորդություն ստացող յուրաքանչյուր հավատացյալ իր հոգում պիտի զգա Տիրոջ ամենակարող զորությունն ու քաղցրությունը:

Ապա «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Պարգև Սրբազանը:

Պարգև Սրբազանի քարոզը

Հանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն,

Սիրելի ժողովուրդ, այսօր մեր տոնը կրկնակի է, եռակի է: Այսօր, ըստ մեր եկեղեցու կանոնակարգի, Քրիստոսի Պայծառակերպության տոնն է, որը գալիս է մեզ հիշեցնելու այն պահը, երբ Հիսուս Քրիստոս Իր երեք սիրեցյալ Առաքյալների հետ բարձրացավ Թաբոր լեռ և այնտեղ նրանց պատվիրեց, որ արթուն մնան և աղոթք անեն: Եվ ահա եկավ մի պահ, երբ Առաքյալները տեսան, թե ինչպես Հիսուս Քրիստոս այլակերպվեց, պայծառակերպվեց, այլ կերպ՝ լուսավորվեց, և իրենք զարհուրեցին ու վախեցան: Պայծառակերպության պահին Քրիստոսի կողքին երևացին Մովսես և Եղիա մարգարեները, որոնք սկսեցին զրուցել Հիսուս

Քրիստոսի հետ: Եվ երկնքից մի ձայն լսվեց՝ Հայր Աստուծո ձայնը, որ ասում էր. «Սա է իմ սիրելի որդին, սրան լսեցեք»: Հիսուս Քրիստոսի կողքին երևացին Մովսեսն ու Եղիան՝ մատնանշելով, ապացուցելով այն, որ Հիսուս Քրիստոս Տերն է և դատավորն է մեռյալների և կենդանիների: Եղիա մարգարեն փառք չգտավ, փառքով համբարձվեց երկինք, իսկ Մովսեսը փառք գտավ: Եվ մեկը կենդանի և մյուսը մեռելների աշխարհից եկան Հիսուս Քրիստոսի մոտ: Հիսուս Քրիստոս պայծառակերպվեց, լուսավորվեց և Իր սիրելի աշակերտներին պատգամեց հետևյալը՝ ասելով, որ նրանց սպասվում են տառապանքներ, չարչարանքներ, բայց նաև մեռելներից հարություն, և Նա պատգամեց, որ Իր պայծառակերպությունն առաքյալները պատմեն միայն ու միայն հարությունից հետո: Եվ առաքյալները չէին կարող հասկանալ, թե ինչ հարության մասին է խոսքը:

Բայց շուտով, պայծառակերպությունից հետո, եղան Քրիստոսի խաչելությունն ու Իր փառավոր հարությունը: Եվ այսօր, սիրելի՛ մեր ժողովուրդ, սիրելի հոգևոր եղբայրներ, մեծարգո պատվարժան իշխանավորներ, սիրելի հրամանատարներ, հարգարժան բարերարներ, սիրելի հավատացյալներ և ուխտավորներ, այսօր մեզ համար իսկապես երազանքների իրականացման օրերից մեկն է: Այսօր ոչ միայն Քրիստոսի Պայծառակերպության տոնն է, այլև մեր մայր Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու Պայծառակերպության տոնն է: Այն իսկապես այսօր պայծառակերպված է, վերադարձված է, սրբագործված է, որը՝ մեզ համար, մեր ժողովրդի փրկության, մեր ժողովրդի զորության համար է: Եվ այսօրը, ես կասեմ, ոչ միայն հոգևոր իմաստով տոն է մեզ համար, սա մեզ համար նաև ազգային մեծ տոն է, որովհետև մեր ամբողջ ազգը մի մեծ ճիգ է թափել այս պահի համար: Ամբողջ ազգն է ոտքի ելել և մասնակցել Արցախի ազատագրությանը, մանավանդ Շուշի քաղաքի ազատագրության համար, մանավանդ այս տաճարը գերությունից ազատելու համար: Ես լավ եմ հիշում այն օրերը 1992 թվականին, երբ ամեն մի հայ, ամեն մի զինվոր սպասում էր, թե երբ նա պիտի մտնի այս լուսաշող տաճար, որովհետև երբ որ նա մտներ այստեղ, ուրեմն Շուշին ազատագրվել էր: Եվ բոլորը, ովքեր մասնակցում էին այս մեծ ճակատամարտին, բոլորը՝ ձգտում էին ուղիղ այստեղ: Եվ մենք բոլորս եկանք, խոնարհվեցինք Քրիստոսի պատկերի առջև, որ շնորհեց մեզ այս հաղթանակները, այս տաճարի ազատագրումը: Ճիշտ է, մեծ դժվարություններ պահանջվեցին, մեծ ճիգեր գործադրվեցին, մեր զավակներն իրենց մատաղ կյանքը տվեցին, իրենց արյունը հեղեցին այս վայրկյանի համար: Ես հիշում եմ, որ երբ մենք եկանք Արցախ՝ այստեղ Ս. Պատարագ մատուցելու, աղոթելու, կարոտով ու երազանքով լեցուն, այս ճանապարհին նայում էինք դեպի Շուշի, դեպի եկեղեցի, որի վրա չկար վեղար, ավերված էր, և կարոտով մեզ իր մոտ էր կանչում: Մեր աչքերը արցունքոտվում էին, երբ ասում էինք՝ Ով Տեր Աստված, երբ պիտի մեզ այն պահը շնորհես, որ մենք գանք այս կամարների տակ մեր աղոթքն անելու: Աստված լսեց մեր աղերսը և այդ պահը պարգևեց մեզ և ողջ հայությանը և, ընդհանրապես, ողջ քրիստոնյա աշխարհին: Ես համոզված եմ, որ այս Սուրբ Պատարագով այս պատմական պահը կդառնա մի նոր հոգևոր արթնություն ոչ միայն Արցախ աշխարհի, այլև համայն հայության համար, որովհետև Սուրբ Ամենափրկիչ տաճարը ազատագրվեց և վերաբացվեց ու վերաօծվեց, պայծառակերպվեց: Պայծառակերպության այս տոնին մենք ևս պարտավոր ենք այլակերպվել՝ մեկ անգամ ևս հիշելով Քրիստոսի պատգամը, թե «եկեք ինձ մոտ»: Մենք այսօր եկել ենք Իր մոտ, եկել ենք Իր անունը կրող տաճար:

ՄԻ ՊԱՀ ՇՈՒՇԻԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ
ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Ուրեմն, եթե Իր մոտ եմ եկել, քարի եղեմ մոռացության տալ այն բոլոր չարն ու վատը, ինչ ունեմ ձեր եղբոր կամ քրոջ նանդեպ: Եթե ձեզ որևէ մեկը նեղացրել է, ներեմ նրան, եթե դուք որևէ մեկին նեղություն եք տվել, գոնե հոգով ներում խնդրեք նրանցից:

Սիրելի ժողովուրդ, եթե կամա թե ակամա որևէ մեկին խոսքով կամ հայացքով, կամ անուշադրությամբ նեղություն եք պատճառել, ապա Աստծու օգնությամբ այս պահից սկսյալ վերանորոգվեք հոգով, որպեսզի կարողանամ վերարժևորել մեր ազգի և Եկեղեցու հոգևոր արժեքները, կարողանամ շարունակել այն ճանապարհը, որը կերտել են մեր հայրերը դարեր-դարեր շարունակ, սկսած առաջին դարից և հատկապես այն ժամանակաշրջանից, որ առնչվում է Ս. Գրիգոր Լուսավորչի, Տրդատ արքայի և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հետ: Եկեք հիշենք այդ ուխտը, վերանորոգենք այն մեր Քրկչի, Սուրբ Առաքյալների առջև, որոնք դարձի բերեցին մեզ: Թող Աստված հաստատ պահի մեր ազգը, անսասան պահի Մայր Հայաստան և Արցախ Հանրապետությունները, նորոգ պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Շնորհավորում եմ բոլորին, ովքեր ամեն ինչով սատար կանգնեցին, որպեսզի իրականություն դառնա այս օրը: Բոլորիդ մեր օրհնությունը: Թող Հիսուս Քրիստոսի Աջը հավերժ լինի ձեր վրա, հաստատ լինի Քրիստոսի Խաչը, դա լինի բոլորիս առաջնորդողը դեպի հավիտենականություն, դեպի լուսավոր ապագա: Օրհնյալ եղերուք, շնորհոք Սուրբ Հոգվույն և թող Պայծառակերպության շնորհքը գորավիգ լինի Ձեզ, մեզ և ամեն մի հայի այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

***

Իր քարոզի վերջում Սրբազան Հայրը նաև շուտափույթ ապաքինում և քարի վերադարձ ցանկացավ Ամենայն Հայոց Հայրապետին, միաժամանակ շնորհակալության ու երախտիքի խոսքեր հղեց բարերարներին և բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունը բերեցին այս նվիրական ու շնորհաշատ գործին:

Հավարտ Ս. Պատարագի, մեզ հետ ունեցած զրույցի ընթացքում ՀՀ գյուղնախարար Վլադիմիր Մովսիսյանն ասաց. «*Թող այս եկեղեցին այլևս երբեք չվերաբացվի: Թող նրա դռները միշտ բաց լինեն, իսկ կամարների տակ Ս. Մկրտություն լինի ու Ս. Պսակ և դրանով էլ մենք հավերժանանք*»:

Տաճարի վերականգնման հովանավոր Անդրեաս Ռուբյանն ավելացրեց. «*Եթե տասը տարի առաջ մեկն ինձ ասեր, թե Շուշիի եկեղեցին պետք է վերաբացվի, կմտածեիք, որ խենթ երազներով է տարված, բայց մենք միշտ էլ երազների և անհնարակայելի հաղթանակների ժողովուրդ ենք եղել և հենց դրանով էլ հավերժում ենք*»:

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերաբացման ուրախ առիթով գնահատանքի խոսքեր ասացին նաև ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանն ու վարչապետ Ժիրայր Պողոսյանը: Նրանց հավաստմամբ, Սուրբ Ամենափրկիչը խորհրդանիշն է հերոսական Արցախ աշխարհի և համայն հայության վերազարթոնքի ու հավատականության:

Ասենք նաև, որ այս ուրախալից առիթով Ղազանչեցոց եկեղեցուն հանձնվեցին մի շարք նվերներ. ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Ցուրի Բախշյանը խորհրդարանի անունից եկեղեցու բացվելիք թանգարանին նվիրեց առաջին ցուցադրանմուշը՝ Ալեքսանդր Գրիգորյանի «Բնաշխարհ» կտավը, Արարատյան Հայրապետական թիմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը տանարին ընծայեց մի գեղանկար՝ Տրդատ արքայի Ս. Գրիգոր Լուսավորչից մկրտվելու պատկերով, Երևանի ոսկերչական գործարանը և ոսկերիչների միությունը եկեղեցուն նվիրեցին արծաթյա ականակուռ խաչ և պսակ:

Սուրբ և անմահ Պատարագից հետո, ներկաները մասնակցեցին սիրո ճաշին՝ ագապեին:

***

Հիրավի, Քրիստոսի հոտի նշմարիտ հովվի համար խիստ կարևոր է, աղոթելու հետ համաժամանակյա, իր աղոթատունն ունենալը, որ է այս պարագային Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Ցյուրաքանչյուր նշմարիտ քրիստոնյա պե՛տք է ունենա իր Թաբոր լեռը, ուր կկարողանա ինքն իրեն գտնել ու հաստատել մարդկային կյանքի հորձանուտում: Նորաձև եկեղեցիով, ասես, հայ հավատավորը մի նոր վերազարթոնք ապրեց, այլակերպվեց: Այն մի պայծառակերպություն է, որ ամրոցին ամեն մի հայորդու գիտակցության մեջ արթնացնում է սեփական առաքելությունն այս աշխարհում ու կոչումը՝ այս կերպ իրավունք տալով ասելու, թե Հակազյան հնամենի ցեղը, իր աղոթքներով ու աղոթատներով, *եղել է՛, է՛ և լինելու է՛*..., իսկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին, իբրև հայի հոգու Թաբոր լեռ, «*Դեպի երկինք բարձրացող*» իր զաղտնի ճամփով հային ուղեկցելու է դեպի հավիտենություն...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ